գերահամբաւ էջս Դորին 'ի լուր բոլոր Ազգայնոց՝ գէթ առ յորդոր լինելոյ ամենեցուն փութալ այսու օրինակաւ կանխել 'ի նուիրաբաշխութիւնս փոխանակ մեծածախս հացկերութի հանդստեան հոգւոց, յօգուտ և 'ի պայծառութիւն սրբոյ Էջմիածնի միակ տեղւոյն պարծանաց Ազգիս Հայոց, նոյնպէս Եկեղեցեաց և Դպրոցաց, որով արդարև Ազգս մեր միայն կարէ պանծալ 'ի փառս կրօնական և Ազգային յառաջադիմութեան օր քան զօր.

Փոխանորդ Թիմոթէոսի Երիւանայ

ՄԵՍՐՈՎԲ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՄԲԱՏԵԱՆՑ.

Ի 5ն Մարտի 1870 ամի

ՅԵՐԵՎԱՆ

Ի՛ՄԻՈՓԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԱՅԱՊ ԱՄԱՓԳՐՈՅ.

Հոգաբարձուն Աստրախանայ Հայոց Հոգևոր Դպրոցաց, Յարգոյ Յովհաննէս Գրիգորեան Պ. Սարգսեանց, Ազգային ջերմեռանդութենից շարժված Դպրոցների բարեկաւութեանը ըղձալով՝ նուիրեց 'ի նպաստ դպրատներին մի հարիւր բուբլի արծաթ դրամ, ցանկալով կրել իւր վերայ կոչումը Բ-ութ-ուրդ Անդամ, Վասնորոյ Հոգաբարձութիւնը նոյն Դպրոցների՝ ընդունելով նուիրագործեալ գումարը Պարոն Սարգսեանցէն՝ նշանաւորեց նորա անունը կոչումով Բ-ութ-ուրդ Անդամ, և յայտնեց իւր կողմանէ գրաւոր գոհունակութիւն. Ուստի Աբարատ ամսագրոյ միջոցաւ կ'փութայ հրատարակել նոյն Պարոնի ազգօգուտ նուիրատուութիւնը, լիայոյս լինելով՝ որ շատերը համազգայիններից կնախանձաւորվին նորա այս օրինակ բարենպատակ գործոյն, և չեն զլանալ իրեանց համակրութիւնը ցոյց տալ Ազգային Դպրոցներին, որոնք յատուկ միջոցն են ազգի յառաջադիմութեան.

Հոգաբարձուք՝ Աւագ Քահանայ Յովսէփ Բունիաթեանց.

Քրիստափոր Դաղաշեանց.

Սարգիս Բուրջալեանց.

Սիմէոն Պապովեանց.

Գրիգոր Սողոմոնեանց.

Թ. 38

Ի 24 Փետրուարի 1870 ամի

ՅԱստրախան.

Ի՛ՄԻՈՓԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԱՅԱՊ ԱՄԱՓԳՐՈՅ.

Անցեալ միջոցներում պատահեց ինձ՝ իմ անձնական գործով գնալ Փամբակաձոր գաւառը. բայց ճանապարհին մասնաւոր տկարութիւն զգալով անձիս մէջը, ստիպուեցայ դադարեցուցանել շարունակութիւնս և շեղուելով ճանապարհից, կամեցայ՝ հանդչել այն մերձակայ գիւղում, որ անուանվում էր Որդնաւ," գուցէ Վարդաձոր". և մինչ այն գիւղի եկեղեցւոյ պարսպի մօտով անցանում էի, լսեցի յանկարծ մի քանի իրար խառնուած ձայն, որոնք երգում էին հայերէն. նորանց ձայնի դաշնակաւոր հնչմունքը շարժառիթ եղաւ իմ տկարութեանս մոռանալուն՝ դիմել փութացայ այն տուն, որից լսվում էր այն ձայնը. ներսմտնելով տեսայ որ յիսունի չափ երեխայք նստած ուսանում են. յետ սովորական ողջունին նորանց վարժիչ Գրիգոր Տ. Բաղդասարեանցի հետ, նստեցի. երգիչներ աւարտելով այն երգը՝ ուրիշ երկու երգեր էլ երգեցին. յետոյ հետաքրքրութեամբ ուզեցի իմանալ այն աշակերտների ուսանելի առարկայքը, որոնցից մի քանիսը, սովորում էին Ազգային և Սրբազան պատմութիւններ. մնացեալքը, պարապումին հասարակ ընթերցանութեամբ, և գլխաւորապէս զարմացայ այն ռամիկ ժողովուրդի զէպ 'ի ուսումնասիրութիւն ունեցած ջանքը, որ այդպիսի մի աննշան տեղում՝ ուսման ճրագը սկսել է մասնաւորաբար լոյս տալ. էս միջոցին, բարեբաղդաբար, ներս մտան Հոգաբարձութեան երկու անդամները, որոնք լցուցին իմ հարցասիրութեան փափագը այն ուսումնարանի հանգամանաց մասին. նոցանից մէկին, Յովհաննէս Զաքարեանին, խնդրեցի տեղեկութիւն տալ ինձ, այդ Դպրոցի վաղուց հիմնաւորութեան կառավարութեան և որպիսութեան մասին. յիշեալ պարոն պատասխանեց ինձ այսպէս.

Մեր հասարակութիւնից մի անձն, Բաղդասար Տէր Բաղդասարեանց անունով, հիմնել է այս դպրոց և նորան պատկանում է սա. սորանից 40 տարի առաջ մինչդեռ մենք Ցաճկաստանումն էինք, պարոն հիմնադրի պապը Բաղդասար Քահանայն ունեցել է մի հրաշալի Աւետարան, և ռուսաց առաջին պատերազմին, երբ Ալաշկերտու և Բասենու բնակիչներ գաղթեցին Ռուսաստան, յիշեալ Քահանայն Աւետարան իւր հետ բերեց. և նորա մահից յետոյ, Աւետարանի ուխտաւորներ, առատ նուէրք-